# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝** Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«25» սեպտեմբերի 2020 թվականի N 797**

## ԳԵՎՈՐԳ ՎԱԼԵՐԻԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժնի 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 66-14/3240 գրության և կից փաստաթղթերի համաձայն՝ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամասի 6-րդ շենքի 9-րդ բնակարանի բնակիչ Գևորգ Վալերիի Գասպարյանը կատարել է առևտուր ոչ սահմանված վայրում՝ խախտելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի>> այսուհետ՝ Օրենսգիրք 162-րդ հոդվածի հատկանիշները, այն է՝ բուսական ծագում ունեցող գյուղատնտեսական արտադրանքի ոչ սահմանված տեղերում առևտուր անելը:

Խախտման վերաբերյալ լսումները քաղաքացու ծանուցմամբ իրականացվել է 2020թ. սեպտեմբերի 17-ին:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով Օրենսգրքի 219.[1]-րդ, 305-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթները, Չարենցավանի համայնքի ղեկավարին կից աշխատանքային խմբի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 6 նիստի արձանագրությունը՝

## *Ո Ր Ո Շ Ե Ց Ի*

1. Գևորգ Վալերիի Գասպարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ Օրենսգրքի 162_րդ հոդվածով /2-րդ մաս/ նախատեսված խախտում թույլ տալու համար և նշանակել վարչական տուգանք 15000 /տասնհինգ հազար / ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Չարենցավան համայնքի 900135101203 հաշվեհամարին:
3. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում գումարը կգանձվի ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» սեպտեմբերի 2020 թվականի N 796**

### ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 12 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետի և 32-րդ կետի ա/,բ/ ենթակետերի պահանջներով և հիմք ընդունելով Ա.Մխիթարյանի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 3348/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի թիվ 12 բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ կառուցված շինությունները:
2. Ընդունել ի գիտություն, որ Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի թիվ 12 շենքում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սահմանել, որ սեփականության իրավունքով Ա.Մխիթարյանին պատկանող 4-րդ թաղամասի 12-րդ շենքի թիվ 3 բնակարանին կցակառույց 14.14 քմ մակերեսով օրինական ճանաչված շինության համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 8910 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
6 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» սեպտեմբերի 2020 թվականի N 795

## ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԱՅԱՆԵ ԱՖՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱԼԱՓԱՐՍ ՍԱՐԱԼԱՆՋ ԹԱՂԱՄԱՍ 13-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 27 ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Գայանե Աֆյանի սեփականության իրավունքը 477.5 քմ մակերեսով հողամասի նկատմամբ;

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» սեպտեմբերի 2020 թվականի N 794**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏԿԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սարգսյան | Չինաշխարիկ | AS0365584 | 30 000 | դրամ |
| Օհանյան | Էլմիրա | AR0428919 | 30 000 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» սեպտեմբերի 2020 թվականի N 793**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի 1-ին թաղամաս 4-րդ շենքի շրջակայքում գտնվող 35.1 քմ արտաքին մակերեսով՝ Արթուր Աբգարյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը /ներքին մակերես՝ 30.49 քմ/ ճանաչել օրինական և գրանցել համայնքային սեփականության իրավունքը:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 46.9 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք.*Չարենցավան 1-ին թաղամաս 1-ին փողոց թիվ 1/3*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Արթուր Աբգարյանին*** ՝գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» սեպտեմբերի 2020 թվականի N 792**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով ***Ամալյա Հակոբյանի*** 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 4431/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Ամալյա Հակոբյանին*** սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Ծաղկունյաց փողոց թիվ 25/4 հողամասը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Ծաղկունյաց փողոց թիվ 25/4*** (հողամասի մակերեսը՝ 0.07228 հա) ***և Չարենցավան համայնք գյուղ Արզական Ծաղկունյաց փողոց թիվ 25/7*** (հողամասի մակերեսը՝ 0.00772 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am**


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» սեպտեմբերի 2020 թվականի N 791**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով ***Գառնիկ Սիմոնյանի*** 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 4430/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Գառնիկ Սիմոնյանին*** սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Ծաղկունյաց փողոց թիվ 25/3 հողամասը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***Չարենցավան համայնք գյուղ Արզական Ծաղկունյաց փողոց թիվ 25/3*** (հողամասի մակերեսը՝ 0.07907 հա) ***և Չարենցավան համայնք գյուղ Արզական Ծաղկունյաց փողոց թիվ 25/6*** (հողամասի մակերեսը՝ 0.00943 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«23» սեպտեմբերի 2020 թվականի N 790**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խաչատրյան | Արարիկ | AM0714042 | 20 000 | դրամ |
| Պողոսյան | Լուսիկ | AT0543499 | 30 000 | դրամ |

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«22» սեպտեմբերի 2020 թվականի N 789**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 612-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով՝ ***որոշում եմ.***

**1.** Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-007-0054-0001 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 20 քմ մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

**2.** Առաջացած հողատարածքը հասցեավորել ***ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 13/4 հողափարածք:***

**3.** Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**4.** Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

**5.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«22» սեպտեմբերի 2020 թվականի N 788**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏԿԱՑԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գևորգյան | Միեր | AT0279114 | 30 000 | դրամ |
| 2. | Գևորգյան | Անահիտ | AN0319754 | 30 000 | դրամ |
| 3. | Ղարախանյան | Ռոզիկ | 005139357 | 10 000 | դրամ |
| . | Առաքելյանց | Ռայա | AR0500748 | 10 000 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«18» սեպտեմբերի 2020 թվականի N 787**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 612-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով՝ ***որոշում եմ.***

**1.** Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-007-045-001 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 878.9 քմ մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

**2.** Առաջացած հողատարածքը հասցեավորել ***ք. Չարենցավան Երիտասարդության փողոց թիվ 6/6 հողատարածք:***

**3.** Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**4.** Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

**5.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2020 թվականի N 786

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԱՎԱԶԱՆ ԹԱՂԱՄԱՍ 4-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք գյուղ Արզական Ավազան թաղամաս 4-րդ փողոց թիվ 25 հասցեի 600 քմ մակերեսով այգեգործական հողամասի վրա ինքնակամ կառուցված 69.48 քմ արտաքին մակերեսով այգետնակը (ներքին մակերես՝ 50.81քմ) կառուցված է 1995 թվականին, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը: Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Չարենցավան համայնք գյուղ Արզական Ավազան թաղամաս 4-րդ փողոց թիվ 25 հասցեի սեփականատեր Ֆիրուզա Նաղդալյանին սեփականության իրավունքով պատկանող այգեգործական հողամասում 1995 թվականին ինքնակամ կառուցվել է այգետնակ՝ 69.48 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 50.81քմ )՝ ***որոշում եմ.***

***1.*** Նշված հողատարածքը հասցեավորել որպես ***«Չարենցավան համայնք գյուղ Արզական Ավազան թաղամաս 4-րդ փողոց թիվ 25»:***
2. Չարենցավան համայնք գյուղ Արզական Ավազան թաղամաս 4-րդ փողոց թիվ 25 հասցեի 600 քմ մակերեսով այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված այգետնակը՝ 69.48 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 50.81քմ )՝ համարել օրինական:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» սեպտեմբերի 2020 թվականի N 785**

**ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***«Արմեն Մարտիրոսյան Արամայիսի»*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամաս 4-րդ փողոց թիվ 6 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3397/12 առ 2020 թվականի սեպտեմբերի 16-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N000169 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Արմեն Մարտիրոսյան Արամայիսի»*** անհատ ձեռնարկատիրոջը 2020 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամաս 4-րդ փողոց թիվ 6 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում (Վկայական N 014352):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» սեպտեմբերի 2020 թվականի N 784**

**ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***«Արմեն Մարտիրոսյան Արամայիսի»*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամաս 4-րդ փողոց թիվ 6 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3396/12 առ 2020 թվականի սեպտեմբերի 16-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 000170 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Արմեն Մարտիրոսյան Արամայիսի»*** անհատ ձեռնարկատիրոջը 2020 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամաս 4-րդ փողոց թիվ 6 շինության տարածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Վկայական N 014351):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնիպետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2020 թվականի N 783

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով ինչպես նաև հաշվի առնելով Պետրոս Ադամյանի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 3409/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Պետրոս Ադամյանին*** սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 7-րդ փողոց թիվ 75*** (0.083 հա) և ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 7-րդ փողոց թիվ 77*** (0.084 հա) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել՝ որպես ***Չարենցավան համայնք գյուղ Բջնի 7-րդ փողոց թիվ 75-77*** (0.167 հա ընդհանուր մակերեսով):
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2020 թվականի N 782

## ՌՈՄԵԼԱ ԲԱՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետի և ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի գլխավոր հատակագիծը՝ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 15-ի թիվ 22 որոշմամբ, ինչպես նաև քաղաքացի Ռոմելա Նորիկի Բաղյանի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 3359/07 դիմումը՝ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին, որոշում եմ.

1. Ռոմելա Բաղյանին սեփականության իրավունքով պատկանող 07-037-0209-0006 կադաստրային ծածկագրով 0,8501 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի անջրդի վարելահողից 0,02 հա-ը փոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Հողատարածքը հասցեավորել՝ որպես ***Չարենցավան համայնք գյուղ Կարենիս Չարենցավանի խճուղի թիվ 1:***
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: պարտավորեցնել Ռոմելա Բաղյանին որոշումն ընդունելուց եռամսյա ժամկետում համայնքի 900135101484 հաշվարկային հաշվեհամարին վճարել 583100 /հինգ հարյուր ութսուներեք հազար հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես կադաստրային արժեքների տարբերություն, իսկ համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 1356180 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար հարյուր ութսուն) դրամ՝ 322.9 քմ արտաքին մակերեսով /ներքին մակերեսը՝258.7 քմ/ հանգստի տնակի օրինականացման վճար.
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**